Հ ա շ վ ե տ վ ու թ յ ու ն
Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի 2013 թվականի աշխատանքային գործունեության վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հուլիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» թիվ 800-Ն որոշմամբ հաստատված ծրագրային միջոցառումներն իրականացվել են սահմանված ժամկետում:

2013 թվականի ընթացքում Նախարարության կողմից մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն են ներկայացվել հետևյալ նախագծերը.

Բազմաբնակարան բնակարանային ֆոնդի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրության բարելավում՝ բնագավառը կարգավորող «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի նախագիծը

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ օրենքի նախագիծը

«Հանրային ռեգիստրների վարման (գրանցման) միասնական սպասարկման կենտրոնների ներդրման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը

Քաղաքացիական հասարակական կազմակերպությունների վերաբերյալ օրենսդրության բարելավում՝ «Քաղաքացիական հասարակական կազմակերպությունների զարգացման ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումների հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը

«Սեփականության արդյունավետ օգտագործման վերաբերյալ հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը

Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության նոր օրենսգիրքը և դրան կից փաթեթը ընդունվել են ՀՀ Ազգային ժողովի կողմից երրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ 2013թ. դեկտեմբերի 5-ին:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը և կից փաթեթը ներկայացվել են ՀՀ Ազգային Ժողով (*Նախագծերը նախատեսում են դատավորների միջև գործերի պատահական բաշխում, դատական իշխանության մշտապես գործող ինքնակառավարման նոր մարմին՝ Դատավորների խորհուրդ, դատավորների խորհրդի հանձնաժողովներ՝ էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով և ուսումնական հարցերի հանձնաժողով, դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցող և կարգապահական տույժի վերաբերյալ որոշում կայացնելու իրավասություն ունեցող սուբյեկտների տարանջատում, դատական վիճակագրության վարման հետ կապված ընթացակարգերի ներդնում, դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ մի շարք սկզբունքային կարգավորումներ, ինչպես նաև դատարանների նախագահների համար պաշտոնավարման ժամկետի սահմանափակում և այլն:)*

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ նոր օրենսգրքի ընդհանուր մասն արդեն իսկ դրվել է շրջանառության մեջ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը ներկայացվել է ՀՀ կառավարություն: *(Նախագծով ընդլայնվում է վարչական ակտ ընդունելու իրավասություն ունեցող վարչական մարմինների շրջանակը և գործնականում ապահովվում է «Վարչարարության հիմունքների և վարչական*

վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի ուժով ընդունված վարչական ակտերով ստրամադրվող իրավունքների իրացումը:)

Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի 98-րդ կետի շրջանակներում մշակվել և շրջանառության մեջ է դրվել:

«Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» և «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը *(Նախագծերով առաջարկվող փոփոխությունները միտված են օրենքների համապատասխան դրույթները ֆինանսական վերահսկողության միջազգային ստանդարտներին՝ INTOSAI-ին համապատասխանեցնելուն)*

«Հայաստանի Հանրապետության պետական պարգևների մասին» ՀՀ օրենքի նախագիծը և կից փաթեթը *(Նախագծերը մշակվել են ՀՀ Նախագահի աշխատակազմի հետ համատեղ)*

«Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին», «Հայաստանի Հանրապետության քննչական դեպարտամենտում պետական ծառայության մասին» և դրան կից փաթեթը:

Օրինականության վերահսկողության ոլորտում իրականացվել են հետևյալ գործողությունները՝

Նոտարների նկատմամբ հարուցվել են թվով 5 կարգապահական վարույթներ, որոնց արդյունքում 3 նոտարներ ենթարկվել են կարգապահական տույժի, իսկ 2 վարույթները կարճվել են:

ՀՀ արդարադատության նախարարը 15.01.2013թ.-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Ալվարդ Մելքոնյանին պաշտոնից ազատելու վերաբերյալ: ՀՀ վարչական դատարանի 31.05.2013թ.-ի վճռով, որն օրինական ուժի մեջ է մտել 11.09.2013թ.-ին՝ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից Ալվարդ Մելքոնյանի վճռաբեկ բողոքը վերադարձնելու արդյունքում, Ալվարդ Մելքոնյանն ազատվել է Կենտրոն նոտարական տարածքի նոտարի պաշտոնից:

Քրեակատարողական համակարգում նշանակվել է թվով 3 ծառայողական քննություն, որոնց արդյունքում խախտումներ չեն հայտնաբերվել և որևէ քրեակատարողական ծառայող կարգապահական տույժի չի ենթարկվել:

Դատավորի կարգապահական պատասխանատվության հիմքերով կազմվել են թվով 21 տեղեկանքներ, որոնցից 3-ի հիման վրա հարուցվել են կարգապահական վարույթներ և 4 դատավորներ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության, 1-ով հարուցված կարգապահական վարույթը կարճվել է ՀՀ արդարադատաության նախարարի կողմից, թվով 18 տեղեկանքներ ներկայացվել են ՀՀ արդարադատության նախարարի դիրքորոշմանը, որոնցից 4-ով ՀՀ արդարադատության նախարարը դեռևս դիքորոշում չի հայտնել:

Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կենտրոնական մարմնի և տարածքային ստորաբաժանումների գործողությունների օրինականության դեմ ներկայացվել է 12 դիմում-բողոք, որոնցից 6-ի հիման վրա հարուցվել են վարչական վարույթներ: Հարուցված վարչական վարույթներից 3-ը՝ կարճվել, 3-ը՝ բավարարվել է, ընդ որում վարչական վարույթի արդյունքում Գործակալության մեկ աշխատակցի նկատմամբ կիրառվել է նկատողություն՝ որպես կարգապահական տույժ: Հասցեագրված 6 դիմում-բողոքներին տրվել է սահմանված կարգով պատասխան՝ վարչական վարույթ հարուցելու հիմքեր չլինելու պատճառով:

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ոլորտ՝

Հայաստանի Հանրապետության ՔԿԱԳ տարածքային մարմինների կողմից կատարվել են հետևյալ ակտային գրանցումները՝ ծննդյան ակտի գրանցում 41.976 (2012թ.– 42.662) և 206 մեռելածին (2012թ. – 689), ամուսնության ակտի գրանցում 18.342 (2012թ. – 19.045), ամուսնալուծության ակտի գրանցում 3.907 (2012թ. – 3.383), հայրության որոշման ակտի

գրանցում 12.958 (2012թ. – 13.201), որդեգրման ակտի գրանցում 89 (2012թ. – 102), մահվան ակտի գրանցում 26.327 (2012թ.– 26.861):

ՔԿԱԳ գործակալության և ՔԿԱԳ տարածքային բաժինների կողմից գանձվել է 302.000.000 (2012թ.– 286.651.000) ՀՀ դրամի պետական տուրք, որից ակտային գրանցումների և դրանց հետ կապված գործառույթների համար գանձվել է 205.166.000 (2012թ.– 189.408.000) ՀՀ դրամի պետական տուրք, ՔԿԱԳ վկայականների և փաստաթղթերի ապոստիլով վավերացման համար՝ 87.885.000 (2012թ. – 90.365.000) ՀՀ դրամի պետական տուրք և ընտանեկան կարգավիճակի վերաբերյալ տեղեկանքներ տրամադրելու համար 8.949.000 (2012թ.– 6.878.000) ՀՀ դրամի պետական տուրք:

Գործակալության ՔԿԱԳ աշխատանքների և ապոստիլի բաժինն ուսումնասիրել է անվան, հայրանվան և ազգանվան փոխման 1.217 (2012թ.– 904), քաղաքացիական կացության ակտերի գրանցումներում փոփոխություններ, լրացումներ և ուղղումներ կատարելու 2.767 (2012թ.– 2.246) և քաղաքացիական կացության ակտերի գրանցումները վերականգնելու 450 (2012թ.– 353) գործեր: Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների խախտմամբ կազմված լինելու և այլ պատճառներով մերժվել են ուղղման, փոխման և վերականգնման 65 (2012թ.–64) գործեր: Փաստաթղթերի անբավարարության և այլ թերությունների պատճառով վերադարձվել են ուղղման, փոխման և վերականգնման 225 (2012թ.–231) գործեր:

Տրվել է ընտանեկան կարգավիճակի վերաբերյալ 11.130 տեղեկանք (2012թ.– 9.004) (քաղաքացիներին՝ 8.949, ՀՀ արտաքին գործերի նախարարություն՝ 2.181):

Սահմանված կարգով ընթացք է տրվել՝ ՔԿԱԳ վկայականների և փաստաթղթերի ապոստիլով վավերացման համար ներկայացված 17.577 (2012թ-18.073) դիմումների, որից 13.809-ը (2012թ-14.334) նոտարական վավերացում ունեցող փաստաթղթեր և 3.768-ը բնօրինակ փաստաթղթեր (2012թ. –3.739), Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և օտարերկրյա քաղաքացիների միջև սահմանված կարգով ամուսնության 1.351 (2012թ. – 1.267) դիմումների, հարցումների 5.861 (2012թ.– 6.334) (ՀՀ արտաքին գործերի նախարարություն, փաստաբաններ, ԱՊՀ համապատասխան կառույցներ, Ոստիկանություն, ինտերպոլի ազգային բյուրո և այլն), քաղաքացիների գրավոր 215 (2012թ.– 175) դիմումների, երեխայի միջազգային առևանգման 3 (2012թ.– 2) դիմումների:

ՔԿԱԳ գործակալության կողմից մշակվել և ՀՀ կառավարության հաստատմանն է ներկայացվել «Որդեգրման կարգը և Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություններում կամ հյուպատոսական հիմնարկներում օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց և Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից որդեգրված՝ ՀՀ քաղաքացի հանդիսացող երեխայի հաշվառման կարգը հաստատելու, ՀՀ կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 1919-Ն որոշման մեջ լրացում կատարելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 269-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին որոշման նախագիծ, որը ՀՀ կառավարության 07.03.2013թ. թիվ 302-Ն որոշմամբ հաստատվել է:

Աշխատակազմի իրավական ակտերի փորձաքննության գործակալություն հաշվետու ժամանակահատվածում մուտքագրվել են թվով 5160 իրավական ակտերի նախագծեր և գրություններ, որոնց վերաբերյալ ներկայացվել են պատասխաններ, ինչպես նաև տրամադրվել պետական փորձագիտական եզրակացություններ: Համեմատության համար նշենք, որ 2011 թվականին գործակալություն մուտք է եղել՝ 4438, իսկ 2012 թվականին 5100 իրավական ակտերի նախագծեր և գրություններ:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի աշխատանքային ծրագրի 1-ին կիսամյակի կատարողականի գնահատականը կազմել է 87.9 միավոր, իսկ 2-րդ կիսամյակինը՝ 97.3 միավոր: